«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

ՀՀ ԳԱԱ Մ. ՔՈՉԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՏՆՕՐԵՆ, ՀՀ ԳԱԱ ԹՂԹԱԿԻՑ ԱՆԴԱՄ,
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«31» հունվարի 2020թ.

ԿԱՐԾԻՔ
ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱՉՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Վարդուհի Գևորգի Գաբրիելյանի «Գույքային հարաբերությունների պետական կարգավորման հիմնախնդիրները ՀՀ տնտեսության զարգացման արդի փուլում» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված Ը.00.01 . - «Ընդհանուր տնտեսագիտություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Մասնակցում էին՝ Վլադիմիր Հարությունյան՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տնտեսագիտ. դոկտոր, պրոֆ., Ռոբերտ Սարինյան՝ տնտեսագիտ. դոկտոր, պրոֆ., Էիլիթ Սարգսյան՝ տնտեսագիտ. թեկնածու, Քրիստինե Բաղդասարյան՝ տնտեսագիտ. թեկնածու, Սվետլանա Դալլաքյան՝ տնտեսագիտ. թեկնածու, Մերի Մանուչարյան՝ տնտեսագիտ. թեկնածու, Տաթևիկ Փարսադանյան՝ տնտեսագիտ. թեկնածու, Բելլա Գաբրիելյան՝ տնտեսագիտ. թեկնածու, Գրիգոր Մանուկյան՝ տնտեսագիտ. թեկնածու, Գևորգ Հարությունյան՝ տնտեսագիտ. թեկնածու, Եվգենյա Հակոբյան՝ տնտեսագիտ. թեկնածու, Շողեր Պողոսյան՝ տնտեսագիտ. թեկնածու

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Գույքային հարաբերությունները հասարակական հարաբերությունների առանձին շերտ են: Դրանք թափանցում են հասարակական կյանքի գրեթե բոլոր ոլորտները (տնտեսական, իրավական, քաղաքական և այլն): Քանի որ հասարակությունն օբյեկտիվորեն ընդգրկված է գույքային հարաբերություններում և չի կարող գոյություն ունենալ դրանցից դուրս, գույքային հարաբերությունների ուսումնասիրությունը պահանջում է համալիր բնույթի խորը հետազոտության իրականացում՝ ներառելով

տարբեր գիտությունների մասնագետների. տնտեսագետների, փիլիսոփաների, իրավաբանների, սոցիոլոգների, քաղաքագետների, պատմաբանների և այլն:

Տնտեսագիտական տեսանկյունից նման ուսումնասիրությունը ենթադրում է հասարակությունում գույքային ռեսուրսների օգտագործման և գույքային հարաբերությունների կարգավորման արդյունավետ լուծումների որոնում: Գույքային հարաբերությունների կարգավորման, գույքային ռեսուրսների արդյունավետ օգտագործման սկզբունքները և մեթոդները պետք է հիմնված լինեն գործնական փորձի և խորը տեսական գիտելիքների ներդաշնակ համադրության վրա:

Հետազոտության օբյեկտը գույքային հարաբերություններն են: **Հետազոտության առարկան** գույքային հարաբերությունների զարգացումն է ՀՀ-ում՝ դրանց իրացման և պետական կարգավորման գործընթացում:

Գույքային հարաբերությունների տնտեսական կողմի աճող դերն ու ոչ բավարար ուսումնասիրվածությունը հիմք են ծառայել ատենախոսության թեմայի ընտրության համար:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել գույքային հարաբերությունների էությունը, դրանց զարգացման օրինաչափությունները՝ հաշվի առնելով պատմական և սոցիալ-տնտեսական հետագծերը, և դրա հիման վրա ցույց տալ գույքային հարաբերությունների կարգավորման ուղղությունները ՀՀ-ում, որոնք միտված են գույքային հարաբերությունների բացասական դինամիկան սահմանափակելուն:

Ատենախոսության նպատակին հասնելու համար սահմանվել են հետազոտության հետևյալ խնդիրները.

- ✓ ուսումնասիրել «գույք» հասկացությունը, գույքային հարաբերությունները,
- ✓ բացահայտել գույքային հարաբերությունների առանձնահատկությունները և որոշել դրանց տեղը հասարակական հարաբերությունների համակարգում,
- ✓ վերլուծել հասարակական տնտեսական ֆորմացիաների առանձնահատկությունները գույքային հարաբերությունների տեսանկյունից,
- ✓ ներկայացնել գույքի տեսակների բազմակողմ դասակարգումը,
- ✓ ցույց տալ ոչ նյութական օբյեկտների նկատմամբ գույքային հարաբերությունների իրացման և դրանց վերարտադրության առանձնահատկությունները ժամանակակից պայմաններում,
- ✓ դիտարկել գույքային հարաբերությունների իրացումը դինամիկայում և առաջարկել դրանց զարգացումը բնութագրող ցուցանիշներ,
- ✓ պետության տնտեսական գործառույթների համակարգում դիտարկել հարկային համակարգի որպես գույքային հարաբերությունների զարգացումը կարգավորող գործիքի դերը,
- ✓ բացահայտել գույքային հարաբերությունների զարգացման առանձնահատկությունները, դրանց դրսևորման նոր ձևերը, որոնք համապատասխանում են ժամանակակից տնտեսական պայմաններին,

✓ առաջարկել գույքային հարաբերությունների զարգացման պետական կարգավորման ուղղությունները,

✓ բնութագրել գույքային հարաբերությունների զարգացման առանձնահատկությունները ՀՀ-ում,

✓ բացահայտել գույքային հարաբերությունների զարգացման գործոնները և ներկայացնել նոր որակի գույքային հարաբերությունների պետական կարգավորման քաղաքականությունը ՀՀ տնտեսությունում:

Աշխատանքում փորձ է արվել բացահայտել զարգացող գույքային հարաբերությունների բովանդակության ժամանակակից ըմբռնումը, որը հնարավորություն է տալիս.

- ընդլայնել գույքային հարաբերությունների ուսումնասիրության ոլորտը տնտեսագիտական տեսությունում, ներկայացնել գույքային հարաբերությունների ժամանակակից էվոլյուցիան հասարակության սոցիալ-տնտեսական կյանքում,
- հիմնավորել պետական կարգավորման ուղղությունները, որոնք նպաստում են գույքային հարաբերությունների դինամիկայի բացասական դրսևորումների սահմանափակմանը, ինչպես նաև հասարակության և պետության շահերի իրացմանը:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թեկնածուական ատենախոսությունը զերծ չէ նաև թերություններից ու բացթողումներից: Դրանցից հատկանշական են հետևյալները.

1. Հեղինակը ատենախոսության 1.2 պարագրաֆում ուսումնասիրել է գույքի բազմակողմ դասակարգման չափանիշները, ինչպես նաև հատուկ ուշադրություն դարձրել գույքի ներքին բովանդակության փոփոխությանը և այն հանգամանքին, որ ժամանակակից պայմաններում գույքը սկսել է ավելի շատ ձեռք բերել անշոշափելի ձևեր: Նկատի ունենալով ՀՀ-ում մարդկային կապիտալի կարևորությունը և դրա օրեցօր աճող դերը տնտեսության զարգացման գործում, կարծում ենք, որ իմաստ ուներ ավելի մանրամասն ուսումնասիրության առարկա դարձնել նաև մտավոր սեփականության առարկաների սահմանումը, և մտավոր սեփականության իրավունքի հետ կապված փոխհարաբերությունները ուսումնասիրվեին ավելի խորացված: Առավել ևս, որ սեփականության իրավունքի միջազգային համաթվում որպես ՀՀ սեփականության իրավունքի համաթվի ոչ լիարժեք բաղկացուցիչ նշվում են մտավոր սեփականության իրավունքները, և հատկապես, մտավոր սեփականության իրավունքների պաշտպանությունը:

2. Ատենախոսության 2.1 պարագրաֆում հեղինակն ուսումնասիրել է գույքային հարաբերությունների իրացումը, և որպես գույքային հարաբերությունների իրացման

արդյունք և դրանց զարգացման նախադրյալ առաջարկել մի շարք սոցիալ-տնտեսական ցուցանիշներ, այդ թվում՝ հարկային եկամուտների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում: Սակայն միաժամանակ պնդել, որ գույքային հարաբերությունների իրացման չափանիշը հարկեր/ՀՆԱ ցուցանիշն է, վիճարկելի է, քանի որ վերջինս կախվածություն ունի ոչ միայն գույքային հարաբերությունների իրացումից, այլև հարկային համակարգի առանձնահատկություններից (մասնավորապես, հարկերի ընդհանուր ծավալում գույքային և ոչ գույքային հարկերի և վճարների մասնաբաժնից, օրինակ, Համաշխարհային բանկի տվյալների համաձայն Չինաստանում հարկային եկամուտներ/ՀՆԱ ցուցանիշը 2016թ. կազմել է 9,2%), ինչպես նաև հարկային համակարգի և դրա կազմակերպման արդյունավետությունից:

3. Ատենախոսության 2.2 պարագրաֆում հեղինակն ուսումնասիրել է գույքային հարաբերությունների զարգացման միտումները և իրացման ժամանակակից ձևերը՝ բիզնես-փոխգործակցության տարբեր ուղղությունների շրջանակներում անդրադարձ կատարելով նաև պետական-մասնավոր գործընկերության ձևերին: Այս համատեքստում, կարծում ենք, որ հեղինակն ավելի հստակ կողմնորոշում պետք է ունենա առաջիկա տարիներին գույքի պետական և ոչ պետական սեփականության իրավունքի միտումների վերաբերյալ:

4. Ատենախոսության 3.1 պարագրաֆում հեղինակը վերլուծելով գույքային հարաբերությունների իրացման գործընթացի ձևավորմանը նպաստող պայմանները, առանձնացրել է գույքային հարաբերությունների պետական կարգավորման ուղղությունները՝ 1.իրավական համակարգի և պայմանագրային հարաբերությունների որակը, 2.սոցիալ-աշխատանքային հարաբերությունների կարգավորման որակը, 3. տնտեսական հարաբերությունների զարգացումը: Կարծում ենք հեղինակը 1-ին կետում իր ուշադրությունը պետք է բևեռեր նաև ավելի «արդար» և արդյունավետ դատական համակարգի գործունեության հարցերի վրա:

5. Ատենախոսության 3.2 պարագրաֆում հեղինակը բնութագրում է գույքային հարաբերությունների իրացման առանձնահատկությունները ՀՀ-ում: Բնակչության հնարավորությունները գույքային հարաբերություններում ընդլայնելու առումով անհրաժեշտ է, որպեսզի հեղինակն ավելի շատ ուշադրություն դարձնի բանկային համակարգի այլընտրանքային հնարավորությունների ձևավորմանը, ինչպես օրինակ՝ կապիտալի շուկայի, ներդրումային հիմնադրամների զարգացմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մեր կողմից նշված դիտողություններով հանդերձ, ներկայացված ատենախոսությունն ունի գիտագործնական նշանակություն, այն ինքնուրույն հետազոտություն է, իսկ հեղինակի կողմից դրված և լուծված են հանրապետության համար կարևորագույն խնդիրներ:

Վարդուհի Գևորգի Գաբրիելյանի «Գույքային հարաբերությունների պետական կարգավորման հիմնախնդիրները ՀՀ տնտեսության զարգացման արդի փուլում» թեմայով թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.01 - «Ընդհանուր տնտեսագիտություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի՝ որպես առաջատար կազմակերպության, «Ատենախոսությունների քննարկման և կարծիքների ներկայացման» հանձնաժողովի նիստում (31.01.2020թ., արձանագրություն թիվ 2):

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ
գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու **Գ. Հարությունյան**

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ
գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու **Տ. Փարսադանյան**

Տնտեսագիտության թեկնածուներ Գ. Հարությունյանի և Տ. Փարսադանյանի ստորագրությունների իսկությունը «հաստատում եմ»՝

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ գիտ. քարտուղար,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Ք. Յու. Բաղդասարյան**
«31» հունվարի 2020թ.